ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«27» սեպտեմբերի 2013թ. N 83

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՄԱՎԻՐԻ ԳԱԶՄԱՇ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2013 թվականի փետրվարի 11-ի N84 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի 12.3.2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15/722 գրությունը.

կարգադրում եմ՝

1. 2013 թվականի հոկտեմբերի 4-ին «Արմավիրի Գազմաշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Որոնողափրկարարական և վթարավերականգնողական միջոցառումների իրականացումը օբյեկտի շինության փլուզման դեպքում» թեմայով:
2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ Ա. Ամիրջանյանին:
3. Ուսումնավարժության ղեկավարին (Ա. Ամիրջանյան)՝ ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը ընդգրկել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատին, «Արմավիրի Գազմաշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետախուզական և որոնողափրկարարական կազմավորումներին, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի մեկ վերակարգ, «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան

Արմավիրի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության շտապ բուժօգնության ծառայությունից մեկ գծային բրիգադ:

4. Ուսումնավարժության ղեկավարին (Ա. Ամիրջանյան)՝ ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ, ապահովել ուսումնավարժության նախապատրաստումն ու կազմակերպել անցկացումը:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝
   1) Ճշգրտել փոխգործողությունների պլանները.
   2) Պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավարումներով և տեխնիկայով.
   3) Ուսումնավարժության ընթացքում պահպանել անվտանգության կանոնների պահանջների կատարումը.
   4) Պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Ուսումնավարժության ղեկավարին (Ա. Ամիրջանյան)՝ սույն կարգադրությունը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

7. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Մ. Քարտաշյանին:

8. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ